



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Սյունիքի մարզ. գ. Նժդեհ հեռ. 094367000

գ. Նժդեհ

18. 01.2017թ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգարժան մարզպետ.

Ձեզ է ուղարկվում ՀՀ Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի
2017թ-ի հունվարի 18 -ին տեղի ունեցած ավագանու հերթական նիստի
թիվ 1-Ա, 2-Ա, 3-Ն, 4-Ա, 5-Ն և 6-Ն որոշումները:

Առդիր՝ 50 թերթ:

Համայնքի ղեկավար

Գ. Օհանյան



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԱԾԽԱՏԱԿԱԾՄԻ ԶԱՐԳՈՒՂԱԾՈՒԹՅԱՆ	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒԹՅՈՒՆ	
ՄՏԻՑ	№ 937
31	01 2017



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ՆԺԴԵՀ համայնք, գ. Նժդեհ, 094367000, Nzhdehg@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» հունվարի 2017թ. N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017թ.-ի ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ.Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ -0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է.

հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ավագանու 2017թ.-ի հունվարի 18-ի նիստի հետևյալ օրակարգը:

1. Նժդեհ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրում
2. Նժդեհ համայնքի 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
3. Նժդեհ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին
4. Նժդեհ համայնքի 2016թ բյուջեի կատարողականը հաստատելու մասին
5. Նժդեհ համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ (5)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

Արմեն Ասատրյան
Ռուզաննա Դիլանյան
Հայկ Թանգյան
Մկրտիչ Յոչյան
Աիդա Օհանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

«18» հունվարի 2017 թ.

գ. Նժդեհ

(Signature)

ԳԵՂԱՄ ՕՇԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՇՐԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Մյունիքի մարզի
ՆՇՐԵՆ համայնք, գ. Նժդեհ, 094367000, Nzhdeh@mail.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» հունվարի 2017թ. N 2-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ.Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ -0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նժդեհ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման ցանկը և համապատասխան ակտը:



Ցանկը կցվում է:


Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (5)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)


Արմեն Ասատրյան

Ռուզաննա Դիլանյան

Հայկ Թանգյան

Մկրտիչ Յոչյան

Աիդա Օհանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

«18» հունվարի 2017 թ.
գ. Նժդեհ



ԳԵՂԱՄ ՕԶԱՆՅԱՆ



Հավելված
Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Նժդեհի համայնքապետարանի
ավագանու 2017թ-ի հունվարի 18-ի թիվ 2 Ա որոշման

8U'4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՃԴԵՀԻ
ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

Հերթական համարը	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման /կառուցման տարեթիվը/	Համարը			Փաստացի առկայությունը		Հաշվապահական հաշվառման տվյալներով		Ծանոթություն
			գույքային	գործարանային	անձնագիր	քանակը	արժեքը /դրամ/	քանակը	արժեքը /դրամ/	
1	Երկաթյա պահարան					1	300	1	300	
2	Դուար					1	285680	1	285680	
3	Տնօրենի աշխատասեղան					1	112000	1	112000	
4	Տնօրենի աթոռ					1	48000	1	48000	
5	Գրապահարան					1	51200	1	51200	
6	Աթոռ					6	88000	6	88000	
7	Փափուկ կահույք					1	144000	1	144000	
8	Համակարգիչ Celeron E400, keyboard, mouse		sdc 4-052			1	165750	1	165750	
9	Մոնիտոր Monitor LCD 19		sdc 4-052/1			1	52920	1	52920	
10	UPS 700 VA		sdc 4-052/2			1	30400	1	30400	
11	Տպիչ, սրաներ Laser Printer		sdc 4-052/3			1	86800	1	86800	
12	Համակարգիչ /սերվեր/ Intel Core i5 2300, keyboard, mouse		sdc 4-052/4			1	294950	1	294950	
13	UPS 700 VA		sdc 4-052/6			1	30400	1	30400	
14	Ներհամայնքային կամուրջ					1		1		
15	Նախկին կապի շենք					1		1		

Ներքոնշված հասցեով կհաաքանոջ շինություններ՝

1	գ. Նժդեհ 1 փող. Տուն 25
2	գ. Նժդեհ 2 փող. Տուն 11
3	գ. Նժդեհ 2 փող. Տուն 13
4	գ. Նժդեհ 2 փող. Տուն 14
5	գ. Ցղունի 1 փող տուն 6
6	գ. Ցղունի 1 փող տուն 14
7	գ. Ցղունի 2 փող տուն 3

Համայնքի ղեկավար՝

Հաշվապահ՝

Գ. Օհանյան

Մ. Հայրապետյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N3-Ն

«18» հունվարի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, ինչպես նաև ընդունելով համայնքի ղեկավար Գ. Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նոդեհ համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նոդեհ համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

- հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 6000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 7000 դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ

- ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ողելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 26000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 50000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

- ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
- բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.
- գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.
- զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2300 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4300 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8300 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ:

51. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 125 դրամ:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 50 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 դրամ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

11.2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժգ» կետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցում վճար՝ 10000 դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 30000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 3000 դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝

1. Աղբահանության վճար սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակիչի համար՝ ամսական 50 դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 դրամ:

16. Շինարարական ու խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող թույլատվության վճար՝ 2000 դրամ:



Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ընթացիկ տարում փոփոխության ենթակա չեն:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ (5)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

 Արմեն Ասատրյան
 Արսեն Ասատրյան
 Հայկ Թանգյան
 Մկրտիչ Յոչյան
 Սիդա Օհանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝
«18» հունվարի 2017 թ.
գ. Նժդեհ



ԳԵՂԱՄ ՕՉԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔ ԻԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ՆԺԴԵՀ համայնք, գ. Նժդեհ . 094367000 , Nzhdehg@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» հունվարի 2017թ. N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ
2017Թ-2021Թ ՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4 կոտով և հիմք ընդունելով համայնքի ղեկավար Գ.Օհանյանի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝ -5, դեմ -0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը:
Ծրագիրը կցվում է.

Աավագանու անդամներ՝

Կողմ (5)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

Արմեն Ասատրյան
Ռուզաննա Դիլանյան
Հայկ Թանգյան
Մկրտիչ Յոչյան
Աիդա Օհանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
«18» հունվարի 2017 թ.
գ.Նժդեհ

ԳԵՂԱՄ ՕԶԱՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**



ՆԺԴԵՀ ՀԱՄԱՅՆՔԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	3
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	3
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	4
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	6
2.4. Համայնքի ֆինանսական լիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ..	6
2.5. Զարգացման խոչընդոտներն ու ժվարություններ	7
2.6. Համայնքի ու ժեղևությունը կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	7
3. Նպատակների սահմանում նգործողությունների պլանավորում	8
3.1. Համայնքի զարգացման տեսլական	8
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	9
4. ՀՀԶՄ ֆինանսավորում	Error! Bookmark not defined.
5. ՀՀԶՄ մոնիթորինգ	Error! Bookmark not defined.
Հավելված 1. Ծրագրերի անձնագրեր	Error! Bookmark not defined.
Հավելված 2. Ծրագրի մոնիթորինգ	Error! Bookmark not defined.

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուրն կարագրություն

Նժդեհ համայնքում բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Համայնքի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, բարենպաստ արոտավայրերի առկայությունը հնարավորություն են տալիս զարգացնելու նշված ճյուղերը: Անասնապահության, դաշտավարության և մեղվաբուծության զարգացումը հնարավորություն կտա համայնքում լուծել մի շարք սոցիալական խնդիրներ, կրճատել գործազուրկների թիվը, ապահովել բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Համայնքի հիմնական պրոբլեմներից են հանդիսանում բնակչության սոցիալական ծանր վիճակը, գործազրկությունը:

Հիմնական պրոբլեմների առկայությունը պայմանավորված է հիմնականում շուկայի և գյուղ տեխնիկայի բացակայությամբ, որը խոչընդոտ է հանդիսանում մեծ ծավալի արոտավայրերի և խոտհարքների առկայության դեպքում հողերի մշակմանը:

Նժդեհ, նախկինում Սոֆլու, մինչև 1988թ բնակեցված էր ադրբեջանցիներով: Ադրբեջանցիների արտագաղթից հետո 1989-92թթ այստեղ բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնագաղթված և տարբեր տարածաշրջանի բնակավայրերից տեղափոխված ընտանիքներ: Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 124կմ հեռավորության վրա:

Նժդեհ համայնքի վարչական տարածքը ներառում է Նժդեհ և Ցղունի գյուղերը:

Ծրագրի մշակումը և քնարկումը իրականացվում է համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու, համայնքի բնակիչների մասնակցությամբ և քննարկմամբ:

Մասնակիցները հանդես են գալիս տարբեր առաջարկներով, դիտողություններով, քննարկումներով, պարզաբանումներով: Ծրագրի մշակումն իրականացվում է փուլ առ փուլ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5520.78 հա, որից վարելահող՝ 351.36հա, խոտհարք՝ 205.30հա, այլ հողատեսք՝ 1665.4հա:

Նժդեհի համայնքի բնակչությունը 2016թ հունվարի 1-ի դրությամբ կազմում է 182 բնակիչ, որից տղամարդ՝ 85, կին՝ 97: Համայնքում փախստականների կարգավիճակ ունեցող բնակիչներ չկան: Համայնքում բնակչության սեռատարիքային կազմը առկա բնակչության համար հետևյալն է՝

տարիքը	արական	իգական	ընդամենը	
0-1	0	0	0	
1-2	1	0	1	
3-4	5	1	6	
5-6	2	5	7	
7-10	3	7	10	
11-14	6	2	8	
15-17	2	4	6	
18-22	7	3	10	
23-45	20	32	52	
46-62	10	11	21	
63և ավել	5	12	17	

2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 4955.5 հազ. Դրամ:

2016թ Համայնքի ընդհանուր եկամուտների մեջ Համայնքի սեփական եկամուտները կազմում են 29.4%, որը հիմնականում ձևավորվում է բնակավայրերի հողային և գույքային հարկերից:

- Համայնքում արդյունաբերական ձեռնարկություններ և արդյունաբերական արտադրանք չկա:
- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հանդիսանում է միսը, մեղրը, կաթը և կաթնամթերքը, հիմնական սպառման շուկաները մոտակա քաղաքային բնակավայրեր և ք. Երևանը:
- Ջրոսաշրջային հեղաբերություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ չկան:
- Հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները 2016թ հունվարի 1-ի դրությամբ

Արտադրանք	հա	Ծավալը (տարեկան)
Գարի	30	600g
Ցորեն	20	400g
Լոբի	3	30g
Լոլիկ	1	10g
Վարունգ	1	15g
Սոխ	0.5	12g
Սխտոր	0.5	8g
Կարտոֆիլ	8	1000g

Արտադրանք		Քանակ
Խոշոր եղջրավոր անասուններ	կովեր	120գլուխ
	Արտադրող ցուլեր	29գլուխ
	Երինջներ 1-2տարեկան	103 գլուխ
	Երինջներ 2 տարեկանից բարձր	33 գլուխ
	Այլ սեռատարիքային խմբի ԽԵԱ	3 գլուխ
Խոզեր		26 գլուխ
Ոչխարներ		202 գլուխ
Այծեր		58 գլուխ
Ձիեր		21հատ
Թռչուններ		227 հատ
Մեղվաբնտանիքներ		261հատ

- Համայնքում գործում է մեկ հիմնական դպրոց, որում սովորում է տասն աշակերտ:
- Համայնքում առողջապահական հաստատություններ չկան
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են երկու ընտանիք:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) և ՎիվաՍԵԼ-USU-ի գործակցության արդյունքում 2015թ.-ին համայնքն ապահովվել է լուսադիոդային (LED) համակարգով գործող արտաքին լուսավորությամբ: Տեղակայվել է լուսավորության 43 սյուն: Իրականացվել է մոտ 11միլիոն դրամի աշխատանքներ:

Մարզպետարանի և համայնքապետարանների մոտ 15մլն ներդրումների շնորհիվ 50տոկոսով լուծվել է բնակչությանը խմելու ջրով ապահովելու խնդիրը:

2015 թ.-ին ստեղծվել է <<Նժդեհ համայնքի արտոգտագործողների միավորում>> կոոպերատիվը: Սակայն կոոպերատիվը առայժմ աշխատանքներ չի իրականացնում՝ համապատասխան գյուղ տեխնիկայի բացակայության պատճառով:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվում է Տեղ բնակավայրում գնտվող Սբ. Գևորգ եկեղեցու վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 90մլն ՀՀ դրամի ներդրում, որի շրջանակներում իրականացվելու է հուշարձանի ապամոնտաժում և վերակառուցում, եկեղեցու շրջակայքի բարեկարգում, դեպի եկեղեցի տանող ճանապարհների վերանորոգում:

2.4. Համայնքի ֆինանսական վիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Նժդեհ համայնքի եկամուտների զգալի մասը (շուրջ 70%) ձևավորվում է պետական բյուջեից համայնքին տրամադրվող ամենամյա դոտացիաներից: Ուստի համայնքի եկամուտների փոփոխությունը մեծապես պայմանավորված է նշված դոտացիայի չափից:

Մյուս կողմից եկամուտները կարող են փոխվել, եթե համայնքում գանձվեղ հարկերի չափն ավելանա: Քանի որ ծրագիրը ներառում է գույքի և հողային հարկերի գանձման արդյուտավետության բարձրացման ռազմավարություն, ակնկալվում է, որ դրա շնորհիվ մոտակա հինգ տարիների ընթացքում համայնքի եկամուտները որոշակիորեն կավելանան: Սույն կանխատեսումը մանրամասնորեն ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Եկամուտներ	2016 փետր.	2017 նախ.	2018 կանխ.	2019 կանխ.	2020 կանխ.	2021 կանխ.
Ընդհանուր եկամուտների չափը	4955.5	5107.0	5500.0	6000.0	7000.0	8000.0
Գույքահարկ քաղաքացիներից	215.5	215.3	300.0	350.0	400.0	500.0
Հողի հարկ համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակությ. հողերից	200.0	200.0	500.0	1000.0	1200.0	1300.0
Հողի վարձավճար համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակությ. հողերից	340.0	350.	400.0	450.0	500.0	500.0
Դոտացիա	3500.0	3641.7	4000.0	5000.0	5000.0	5500.0
Այլ եկամուտներ	700	700	300.0	800.0	100.0	200.0

2.5. Ջարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Նժդեհ համայնքում կան լայն հնարավորություններ անասնապահության, դաշտավարության և մեղվաբուծության զարգացման համար: Համայնքի զարգացման հիմնական դժվարություններից մեկն է հանդիսանում գյուղ տեղնիկայի և շուկայի բացակայությունը:

Այն խոչընդոտ է հանդիսանում հետևյալ խնդիրների լուծման համար՝

- Համայնքի վարելահողերի, արոտավայրերի և խոտհարքների մշակում
- Գյուղատնտեսական արտադրանքների իրացում

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՀՍ) վերլուծություն

Թույլ կողմեր

Ուժեղ կողմեր • Բանիմաց աշխատուժ • Արտավայրերի և խոտհարքների առկայություն • Բնակլիմայական պայմաններ	Թույլ կողմեր • Գործազրկության կամ թերզբաղվածության բարձր մակարդակ, • Սոցիալապես ծանր վիճակում գտնվող բնակչություն (աղքատության շեմից ցածր գտնվող բնակչություն)
Հնարավորություններ • Աշխատուժի մեծ զանգված • Բնակավայրերի և խոտհարքների առկայություն	Մտածողություն • Մտածողություն • Բնակավայրերի և խոտհարքների առկայություն

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Նժդեհ համայնքը միտված է իր բնակիչների համար ապահովել սոցիալ-տնտեսական կայուն զարգացում: Այն ունի գյուղատնտեսության բնագավառում զարգացման ներուժ :

Պետական աջակցության, ներդրումների, բնակիչների կողմից աջակցության շնորհիվ համայնքը նպատակ ունի մոտակա հինգ տարիների ընթացքում հասնել շոշափելի փոփոխությունների և հաջողություններ՝ կապված բնակիչների սոցիալ տնտեսական զարգացման, աղքատության նվազման, և բնակչության կենսամակարդակի բարձրացման հետ:

- Վերոնշյալ տեսլականին հասնելու համար սույն ծրագրի շրջանակներում համայնքը սահմանել է հետևյալ թիրախները՝
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը բանակավայրերի ընտանիքների ընդհանուր թվին,
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,
- Համայնքի բնակավայրերում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով):
- Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն
- Համայնքում բնակարանային շինարարության խթանումը

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Ստորև բերված անմիջական նպատակները հիմնված են համայնքի տեսլականի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր խնդիրների հիման վրա: Այս բաժնում հստակեցված է նպատակների չափման ցուցանիշները և դրանց թիրախային արժեքները, առնչվող խնդիրները, նախատեսվող միջոցառումները և դրանց միջանկյա արդյունքները: Այս ծրագրերն ավելի մանրամասն ներկայացված են Հավելված 1-ում:

1. Բազմավեկտոր գյուղատնտեսության զարգացում

Առնչվող խնդիր(ներ)	Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում, Գյուղատնտեսության զարգացման խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Կաթի, մսի, մեղրի արտադրության ծավալների աճ: - Գյուղատնտեսների շրջանում մեղվաբուծության բնագավառում անվճար խորհրդատվության տրամադրում, - Գյուղատնտեսներին մեղվաբնտանիքների տրամադրում: - Ֆերմերային տնտեսություններին գյուղ տեխնիկայով ապահովում: - Կաթի, մսի, մեղրի աճեցման խրախուսում: - Գյուղմթերքների շուկաների ընդլայնում:
Չափման ցուցանիշ(ներ)	- Բերքատվության չափը, - Գյուղատնտեսության ոլորտում ձեռնարկատիրությամբ զբաղվող սուբյեկտների թիվը, - Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամուտների չափը, - Մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի հարաբերությունը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերին:
Թիրախային արժեք(ներ)	- Բերքատվության և գյուղատնտեսական ապրանքների սպառման տարեկան աճ առնվազն 20%-ով, - Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների եկամուտների տարեկան աճ առնվազն 20%-ով, - Մշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժնի աճ առնվազն տարեկան 20%-ով:
	Բնակարանաշինություն

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքում բնակարանաշինության խթանում Բնակչության բնակարանային և կենցաղային պայմանների բարելավման խթանում
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Բնակելի շենքերի բարեկարգում Վերանորոգման կարիք ունեցող բնակարանների տանիքների մակերեսի հաշվում Բարեկարգման կարիք ունեցող բնակարանների հետազոտում, ուսումնասիրում, հաշվառում և նախագծային հաշվարկ: Պայմանագրերի կազմում համապատասխան շինարարական կազմակերպությունների հետ:
Չափման ցուցանիշ(ներ)	Վերանորոգված բնակարաններ
Թիրախային արժեք(ներ)	Բնակչության կենսամակարդակի բարձրացում

1. Ոռոգման և խմելու ջրի ցանցերի կառուցում և բարենորոգում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապավովումը
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Համայնքի ոռոգման ջրի պաշարների կորստի նվազեցում Ոռոգման ջրի ջրատարների վերանորոգում:
Չափման ցուցանիշ(ներ)	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից:
Թիրախային արժեք(ներ)	Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) ոռոգման ջրերի մատակարարումից:

2. Համայնքի բնակավայրերում նախակրթական և ուսուցման իրականացում

Առնչվող խնդիր(ներ)	Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն
--------------------	--

Միջանկյալ արդյունքներ և դրանց միավորված գործողություններ	Առանձնացված նախադպրոցական հաստատությունների առկայությունը համայնքում: • նախադպրոցական հաստատությունների համար անհրաժեշտ վայրերի տրամադրում, • Առանձնացված շինություններում անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների իրականացում: Ջեռուցվող նախակրթական հաստատություններ: • Նախակրթական հաստատությունների համար գրանուլային վառարանների ձեռքբերում: Բարելավված ճաշացանկ բոլոր նախակրթական հաստատությունների համար: • Ճաշացանկի բարելավման համար խորհրդատվությունների անցկացում համապատասխան մասնագետների հետ, Նախակրթական հաստատությունների համար նոր ճաշացանկի կազմում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին • Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից
Թիրախային արժեք(ներ)	• Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների չափաբաժնի ավելացում առնվազն մինչև 80% մինչև 2019թ.-ի ավարտը: • Ծնողների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում),

3. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում, կանաչապատում, սանիտարական մաքրում, աղբահանության իրականացում և գերեզմանատների և առնչվող խնդիրների կարգավորում

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապավովումը
Միջանկյալ արդյունքներ և դրանց միավորված գործողություններ	Առնվազն շաբաթական մեկ անգամ աղբահանության իրականացում համայնքի բոլոր բնակավայրերում, • Աղբատար մեքենայի և աղբամանների ձեռքբերում, • Համայնքի բնակիչներին աղբահանության գրաֆիկի մասին տեղեկատվության տրամադրում Համայնքի բնակավայրերում առկա աղբի չափաբաժնի

	նվազում, • Համայնքի բնակավայրերը աղբից մաքրելու համար ֆինանսական միջոցների հայթայթում, • Լայնածավալ աղբահանության իրականացում, • Աղբի տեղափոխության վերաբերյալ պայմանագրի կնքում
Չափման ցուցանիշ(ներ)	• Բնակիչների բավարարվածության մակարդակը իրականացվող աղբահանությունից • Համայնքի բնակավայրերում առկա աղբի չափաբաժինը
Թիրախային արժեք(ներ)	• Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվող աղբահանությունից (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում), • Մինչև 2021թ.-ը համայնքի բնակավայրերում առկա աղբի առնվազն 70%-ի դուրսբերում

4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

Առնչվող խնդիր(ներ)	Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն
Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Բոլոր կարիքավոն ընտանիքների գրանցում և նրանց համար ֆինանսական օգնության հասանելիության ապահովում • Դժվարին սոցիալական պայմաններում գտնվող ընտանիքների տվյալների թարմացում, • Կարիքավոր ընտանիքների հասանելիք օգնության պատշաճ տրամադրում:
Չափման ցուցանիշ(ներ)	• Սոցիալական ծրագրի առկայություն, • Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը ծրագրից:
Թիրախային արժեք(ներ)	• Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) իրականացվող ծրագրից:

5. Համայնքում իրականացվող ծրագրերում բարեգործության դերի մեծացում

Առնչվող խնդիր(ներ)	Բարեգործության խթանում
--------------------	------------------------

Միջանկյալ արդյունքներ և դրանց միտված գործողություններ	Բարեգործական նպատակներով հանգանակված գումարի չափի աճ - Ֆինանսավորման անհրաժեշտություն ունեցող համայնքային ծրագրերի և դրանց կարևորության մասին տեղեկատվության տարածում, - Հավանական բարերարների հետ կապի հաստատում և նրանց խնդրի ներկայացում
Չափման ցուցանիշ(ներ)	Բարեգործական նպատակներով հանգանակված գումարի չափը,
Թիրախային արժեք(ներ)	Բարեգործության նպատակներով հանգանակված գումարի աճ տարեկան առնվազն 10%-ով:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Այս բաժնում ներկայացված է, թե վերը նշված ծրագրերն ինչ ֆինանսական միջոցներով են իրականացվելու:

2. Բազմավեկտոր գյուղատնտեսության զարգացում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	4955,5
	Ելակետային տարվա արժեք	4955,5
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	1455,5
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	3500,0
	Բարեգործություն/սվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	60,0
	Այլ աղբյուրներ	0
	„Նժդեհ համայնքի արոսոգտագործողների կոոպերատիվ,, - առկայության դեպքում կնքվել է եռակողմ պայմանագիր, որի համաձայն գյուղտեխնիկայի ձեռք բերման համար 20000 .0 դրամ ներդրում է իրականացնելու Նժդեհ համայնքը, 30000 .0 դրամ պետության կողմից և 50000.0 դրամ ներդրում է իրականացվելու արտասահմանյան կազմակերպությունների կողմից:	

Բնակարանաշինություն

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	4955,5
	Ելակետային տարվա արժեք	4955,5
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	1455,5
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	

	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	3500,0
	Բարեգործություն/նվիրատվություն	10000,0
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	60,0
	Այլ աղբյուրներ	10000,0
Ֆինանսավորման առկայությունը	Նպատակ ունենք ֆինանսավորումն իրականացնել պետության, մարզպետարանի, արտաքին ներդրումների շնորհիվ:	

1. Համայնքի բնակավայրերում նախակրթական և ուսուցման իրականացում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	380000
	Ելակետային տարվա արժեք	70000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	40000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Բարեգործություն/նվիրատվություն	6500
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	335000
	Այլ աղբյուրներ	8500
	Այս ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների մեծ մասի (373500 հազար ՀՀ դրամ) հարցը դեռևս լուծված չէ: Այս խնդիրը լուծելու համար համայնքապետարանը պատրաստվում է դիմել արտաքին պաշտոնական դրամաշնորհների և խնդիրը բարձրացնել բարեգործական միջոցառումների շրջանակներում: Մնացած 6500 հազարը տրամադվելու է համայնքապետարանի հետ համագործակցող բարեգործների կողմից:	

Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, աղբահանության իրականացում և գերեզմանատների հետ առնչվող խնդիրների կարգավորում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	247000
	Ելակետային տարվա արժեք	155000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	60000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	

	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	170000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	10000
	Այլ աղբյուրներ	7000
Ֆինանսավորման առկայությունը	143000 հազար ՀՀ դրամի համար ներկայացվել է ֆինանսավորման հայտ: Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 104000 հազար ՀՀ դրամ:	

Ոռոգման և խմելու ջր ցանցերի կառուցում և բարենորոգում

Բյուջե (հազար ՀՀ դրամ)	Ընդհանուր բյուջե	250000
	Ելակետային տարվա արժեք	70000
Ֆինանսավորման աղբյուրները	Համայնքի սեփական եկամուտներ	25000
	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	
	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	100000
	Բարեգործություն/նվիրատվություն	
	Պետություն-համայնք-մասնավոր սեկտոր համագործակցություն:	125000
	Այլ աղբյուրներ	
	Համայնքը դեռևս պետք է ձեռք բերի 225000 հազար ՀՀ դրամ, որի նպատակով պատրաստվում է համագործակցել համայնքի մասնավոր սեկտորի հետ և հայտ ներկայացնել պաշտոնական դրամաշնորհի ստանալու համար:	

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

Համայնքում կատարվելիք աշխատանքների արդյունավետությունը ստուգվելու է վերը նշված ծրագրերի մոնիթորինգի իրականացմամբ: Այն հնարավորություն կտա ստուգել, թե համայնքը որքանով է հասել այս ծրագրում նշված թիրախային արժեքներին:

Մոնիթորինգն իրականացվելու է փաստաթղթային ուսումնասիրությունների և հարցումների միջոցով: Եթե առաջին մեթոդի նպատակն է համապատասխան թվային ցուցանիշների դուրսբերումը, ապա հարցումներն ուղղված են լինելու բնակիչների բավարարվածությունը իրականացվելիք ծրագրերից ստուգելուն:

Համայնքի բնակիչների բավարարվածության չափումը իրականացվելու է Լայկերտի սանդղակի կիրառման միջոցով: Մասնավորապես բնակիչների

շրջանում իրականացվելու են հարցումներ, որոնց շրջանակներում նրանք պետ է արտահայտեն իրենց բավարարվածության մակարդակը՝ ընտրելով հետևյալ սաղնդակի տարբերակներից մեկը՝

1. Շատ վատ, Վատ, Մասամբ Վատ
2. Բավարար
3. Մասամբ լավ, Լավ, Շատ լավ

Հավելված 3-ում ներկայացված է յուրաքանչյուր ծրագրի նպատակների չափման ցուցանիշները, դրանց տարեկան թիրախային արժեքները, մոնիթորինգի իրականացման հաճախականությունը, ցուցանիշների ստացման աղբյուրները և կիրառվելիք մեթոդները:

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացվելու է ծրագրի միջանկյալ և վերջնական արդյունքների գնահատում: Գնահատման հիմնական նպատակն է բացահայտել այն խոչընդոտները, որոնք խանգարում են ծրագրի նպատակների իրականացմանը: Միջանկյալ գնահատման արդյունքները կուղղորդեն ծրագրում անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու հարցում, իսկ վերջնական գնահատումը հիմք կհանդիսանա հետագա զարգացման ծրագրերի կազմման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ. Ծրագրի անձնագրեր

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

«Ոռոգման համակարգի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	2 Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ոռոգման համակարգի կառուցում						
	Ցուցանիշներ Վարելահողերի և այգիների լիարժեք օգտագործում %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		5	5	10	10	50	70
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ Համայնքի բնակիչների կյանքի որակի բարձրացում %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		15	15	15	20	40	70
	2.						
	Ցուցանիշներ Համայնքի բնակիչների բավարարվածությունը ոռոգման ջրի մատակարարումից	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Մշտական վերահսկողության իրականացում ոռոգման համակարգի անխափան աշխատանքը ապահովելու համար:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն 247000000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժի ներգրավում Համապատասխան սարքավորումների ձեռքբերում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա օգտագործել համայնքի վարելահողերն ու այգիներն ամբողջությամբ, ինչը հնարավորություն կտա զարգացնելու գյուղատնտեսությունը, Բնակիչների բավարարվածության բարձր մակարդակ (ընդհանուր առմամբ «լավ» կամ «շատ լավ» գնահատականի գերակշռում) ոռոգման ջրերի մատակարարումից:կբարելավվի բնակչության բարեկեցությունը						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

**«Համայնքում նախադպրոցական
հաստատության բացում
(Օրագրի անվանում)**

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	3. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն						
Օրագրի անմիջական նպատակ	Համայնքում նախադպրոցական ուսուցման իրականացում						
	Ցուցանիշներ Ծնողների բավարարվածությունը նախադպրոցական կրթությունից	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			բավարար	բավարար	լավ	լավ	
Օրագրի միջանկյալ արդյունքներ	Շենքային պայմանների բարելավում						
	Ցուցանիշներ Հիմնանորոգման կարիք ունեցող մանկապարտեզի շենքը	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		20	30	40	60	70	90
	1. Մենդի որակի բարձրացում						
	Ցուցանիշներ Մեկ երեխային բաժին ընկնող սենդի չափաբաժինը	Ելակետային Արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			180	180	200	210	230
Օրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.Համայնքում նախադպրոցական հաստատության համար անհրաժեշտ վայրի տրամադրում, 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1Առանձնացված շինությունում անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների իրականացում: 2.2 Համայնքում նախադպրոցական հաստատության անհրաժեշտ գույքի առկայություն: 2.3 .Գույք ձեռք բերելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթում 3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 3.կրթության որակի նկատմամբ անընդհատ հսկողություն, մասնագիտական գիտելիքների բարելավում						
Օրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն՝ 380000000						
